ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքում ուղղագրական սխալ *չկա:***

1) պարգև, պանդուխտ, հեքիաթասած, դշխուհի
2) ամանորյա, առնչվել, ընդամենը, ակնակապիճ
3) քսուք, դաստիրակ, ճմռթել, գաղտագողի
4) ինչևիցե, գոմեշ, այժմէական, բարվոքել

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով:**

1) ակնհայտ, աշակերտ, ապականել, արնանման
2) ընտանի, ընթերցել, ընկճվել, ընչաքաղց
3) մանուշակ, մսագործ, մկրտություն, միայնակ
4) սարյակ, սրբազան, սրբիչ, սեղանատուն

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերի և բառաձևերի վերջին վանկն է շեշտվում:**

1) թռչուն, գետակ, լիտր, բուրմունք
2) չորրորդ, գլուխ տալ, գիտակցորեն, եվրոպական
3) սովորություն, պատանիները, վազեվազ, լայնատերև
4) գիսաստղեր, Հովհաննես, երկրորդ, հոլանդական

4 **Ո՞ր բառում է գաղտնավանկի *ը*-ն սխալ տեղադրված:**

1) խ(ը)նդրանք
2) ձեռ(ը)նբաց
3) գտ(ը)նվել
4) լուս(ը)նկա

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) սատար, զորավիգ, կորովի, ապավեն
2) մարտիրոս, զոհ, հտպիտ, նահատակ
3) շողոքորթ, երեսպաշտ, շողոմ, գրգամոլ
4) եղծել, աղավաղել, խեղաթյուրել, նենգափոխել

6 **Ո՞ր բառում *-ուկ* ածանց *չկա:***

1) հանելուկ
2) բանուկ
3) փափուկ
4) նորելուկ

7	**Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:**

1) մոխրագույն – ***մոխիր, գույն***՝ արմատներ, ***ա*** ՝հոդակապ
2) միջնապատ – ***միջին, պատ***՝ արմատներ, ***ա*** ՝հոդակապ
3) ճամփաբաժան – ***ճամփա, բաժ*** ՝ արմատներ, ***ան*** ՝վերջածանց
4) հրագանգուր – ***հուր, գանգուր*** ՝ արմատներ, ***ա*** ՝հոդակապ

8	**Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն:**

1) Անցել էինք ամրոցի բոլոր պահակակետերն **անարգել**:
2) **Անարգել** կարող էր բացել ցանկացած փակ դուռ:
3) Չին **անարգել** թռավ վերջին ճողապատնեշի վրայով:
4) Իշխանին **անարգել** ու անցնել անպատիժ նա չէր կարող:

9	**Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայ կա:**

1) Ճախարակի պես երգ մանելով, հետո աղմուկ թափելով՝ հռնդաց, անցավ շողերի մեջ սպիտակ ինքնաթիռը:
2) Հրավիրեցին բոլորին՝ դերասանների, լրագրողների, պաշտոնաթող գեներալների, իսկ իրեն մոռացան:
3) Առանց Թորիկի հետ խորհրդակցելու՝ նա մտավ մսագործ Ասատուրի, պատշար Օղասաբի, հացագործ Սիմոնի տները և բոլորից էլ մերժողական պատասխան ստացավ:
4) Գրիգոր Նարեկացու մասին պատմող ամենահավաստի աղբյուրները նրա երկերի հիշատակարաններն են:

10	**Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված ենթադրական եղանակով:**

1) կգաս, չի աղոթի, կամայանա, կընկերանային
2) կշտամբեց, կայրի, կուղարկի, չի ուղղի
3) կուտեմ, չեմ սուզվի, կաշխատենք, ջանա
4) կապրենք, կուտակենք, կտեսնի, կուշանա

11	**Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:**

1) Հենց գարունը բացվի, կտեղափոխվենք:
2) Չնայած սառնամանիքին՝ մրցումները չէին դադարել:
3) Հենց այդ գյուղն է մեր որոնածը:
4) Այնպես էին խառնել ամեն ինչ՝ սատանան իսկ գլուխ չէր հանի:

12 **Ո՞ր նախադասության մեջ թվական կա:**

1) Դասարանների միջև անցկացվող մրցությունն ավարտվեց, և նրանք՝ և՛ պարտված ութերորդցիները, և՛ հաղթած յոթերորդցիները, բարձր աղաղակեցին:
2) Ուսուցչուհին հրահանգեց, որ երկրորդ շարքը պիտի վազի մինչև աղբյուր:
3) Մեզ համարներ տվեցին ու խմբերի բաժանեցին. զույգ թվակիրները մի քանի քայլ առաջ եկան:
4) Ինձ խմբի ավագ նշանակեցին, ու ես տեսա, որ թեկուզ փոքրիկ, թեկուզ յոթհոգանոց խմբի գլուխ կանգնելն ինձ դուր է գալիս:

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:**

1) հպարտ, լրջորեն, ջինջ, թափանցիկ
2) երկարատև, դուրեկան, հոգեպարար, աղմկոտ
3) մարդախույս, զարմացած, միակ, պարզունակ
4) զվարթ, առատաձեռն, ժպտուն, ներքուստ

14 **Ո՞ր տարբերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված:**

1) Պատիվդ պահող չկա,
   Մասրենի՛, սարի՛ մասրենի: *(դերբայ)*
2) Ի՞նչ անեմ ես՝
   Մոլորյալս՝ խեղճ ու կրակ,
   Իրար բերեմ բևեռները իմ հակառակ,
   Մեկմեկու հետ հաշտեցնեմ: *(ածական)*
3) Աշխարհում այս աղոտ ես քնքուշ
   Մի հեքիաթ հյուսեցի քո մասին: *(դերանուն)*
4) Իմ տխուր հոգում ծագում է ոսկի
   Ճաճանչը հուսո հարատև կյանքի: *(գոյական)*

15 **Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Նրա ահեղագոչ ձայնը անցավ որպես փոթորիկ այդ երկրի մի սահմանից մինչև մյուս սահմանները:
2) Որոտում է ձորն ի վար
   Հոսում է ինքը ինքը
   Նորին մեծություն փլված երկինքը:
3) Ես նրանից հուր եմ ուզում
   Անշեջ հուրը սրբազան:
4) Մեր առջև բացվեց մի հրաշք տեսարան բիբլիական լեռն էր:

16 **Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածը:**

Սևադա իշխանը ուրախանում էր իր դստեր բոլոր իրձերը կատարելով:

1) միջոցի խնդիր
2) ներգործող խնդիր
3) ձևի պարագա
4) ստորոգելի

17 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Օրերի մշուշից մոտենում է ինձ չոլախ Եգորը, ելնում է, ինչպես մեր ժայռերը՝ սպիտակ մառախուղի միջից, և ես տեսնում եմ նրա ցեխոտ մեջքը և կավի նման մաշկը, որ դեղնել էր քարանձավի խոնավությունից:



18 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

-Սմբա՛տ, դու պետք է ներողություն խնդրես ինձնից քո անվայելուչ արարքի համար,- ասացի ես:

1) Ես ասացի Սմբատին, որ ինքը պետք է ներողություն խնդրի ինձնից իր անվայելուչ արարքի համար:
2) Ես ասացի, որ Սմբատը թող ներողություն խնդրի ինձնից իր անվայելուչ արարքի համար:
3) Ես ասացի Սմբատին, որ նա պետք է ներողություն խնդրի ինձնից նրա անվայելուչ արարքի համար:
4) Ես ասացի, որ Սմբատը պետք է ներողություն խնդրի նրանից իր անվայելուչ արարքի համար:

19 **Ո՞ր տարբերակում ընդգծվածը նախադասության անդամ *չէ:***

1) **Սեղանի վրա** դրված մոմը վերջին ցոլքերն էր արձակում:
2) **Ինչ** էր պատահել՝ այդպես էլ չիմացանք:
3) Դուք, **կարծում եմ**, չարաչար սխալվում եք:
4) Նա չզգաց՝ **երբ** անցավ ժամանակը:

20 **Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Գերանը չկոտրվեց կացնով ուժգին հարվածելուց հետո և սղոցով կտրեց:
2) Հայրը երբ էր հնձել լանջի այդ խոտհարքը տղան չէր կարողանում հիշել:
3) Այդ ամենի հողածածկ կտուրներով տների ու գյուղական խորդուբորդ ճամփաների կարոտն էր զգում մշտապես:
4) Պատերազմը նոր էր վերջացել կամ դեռ չէր վերջացել հոր հագին բանակային շինել էր:

21 **Ո՞ր նախադասությունն է արևմտահայերենով:**

1) Եվ շա՜տ ցավեցոյց զմէջք փափուկ օրիորդին՝ Արագ հասուցանելով ի բանակն իւր:
2) Էն լեզվներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործերքը, նրանց արածներն ու ասածները:
3) Մեծ պատահարները զիս անտարբեր կը թողուն, բայց մանր դեպքերը՝ չնչին ուրիշների աչքին, լուրջ խորհրդածություններու նյութ են ինձի:
4) Եթե հույս ունինք ապագայի վերա, նորա երևեցուցիչը դուք եք, ձեզանից կախվում է ազգի ապագան, և ձեր վերա է միակ հույսը:

22 **Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

Չըտեսայ քու դիդարի պէս՝ դուն դիփունէն բաշ, նազա՛նի,
Թէ խամ հաքնիս, թէ զար հաքնիս, կու շինիս դումաշ, նազա՛նի,
Էնդու համա քու տեսնողըն ասում է վա՜շ, վա՜շ, նազա՛նի:

1) «Դուն է՛ն գըլխեն իմաստուն իս»
2) «Աշխարումս ա՜խ չիմ քաշի»
3) «Թամամ աշխար պըտուտ էկա»
4) «Աշխարս մե փանջարա է»

23 **Հատվածներից որը Պ. Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է:**

ա. Ո՜հ, խուրձ մը վարս, եղեմ մը շունչ,
Շրջազգեստ մը շրշեց իմ շուրջ:
բ. Այլ, ո՜հ, ի՞նչ կ’ըսեմ… շանթահարե՛ զիս,
Աստվա՛ծ, խոկն հըսկա փշրե՛ հյուլեիս…
գ. Շատերը զիս մերժեցին.
«Քընար մ’ունի սոսկ»,-ըսին:
դ. Հեք մարդկության մեկ ոստը գոս
Հայրենիք մը ունիմ թըշվառ…

1. «Տրտունջք»
2. «Իմ ցավը»
3. «Սիրել»
4. «Լճակ»

1) ա-3, բ-1, գ-4, դ-2
2) ա-2, բ-3, գ-4, դ-1
3) ա-4, բ-2, գ-1, դ-3
4) ա-3, բ-2, գ-4, դ-1

24 **Ո՞ր պնդումն է սխալ Ռաֆֆու «Սամվել» վեպի վերաբերյալ:**

1) Վեպն սկսվում է Արարատյան դաշտի առավոտի նկարագրությամբ:
2) Վեպի պատերազմական դրվագում Սամվելը շտապում է հասնել հոր վրանը, որպեսզի վրեժով լցված լեռնականները չպոծեն հոր դիակը, պատառ-պատառ չանեն ու ռազմի դաշտով ցրիվ չտան:
3) Վեպում գրողը փորձել է վերստեղծել 4-րդ դարի քաղաքական անցքերի կենդանի պատկերը:
4) Մերուժան Արծրունին գլխավոր կերպարներից մեկն է, ազգուրաց դավաճան, որի ճակատագիրը վեպում մնում է անորոշ:

25 **Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի «Ես»-ի անանուն հերոսը նշվածներից իտալական ո՞ր վերնագրով սիրավեպն է թարգմանաբար ներկայացնում ընթերցողին՝ այն վերանվանելով «Նա»:**

1) «Զոջում»
2) «Ծնրադրում»
3) «Հատուցում»
4) «Վրեժ»

26 **Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի նախերգանքի երկտողերի ո՞ր հերթականությունն է ճիշտ արտահայտում այդ երկտողերի հաջորդականությունը:**

1. Որդիդ լինի, թե հերն ու մեր,
   Թե մուրազով սիրած կին
2. Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
   Որ խոսվում է դարեդար
3. Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
   Անե՜ծք նրրա չար գործին
4. Երնե՜կ նրրան, որ իր գործով
   Կապրի անվերջ, անդադար

1) 2, 3, 4, 1
2) 4, 2, 1, 3
3) 1, 3, 2, 4
4) 2, 4, 3, 1

27 **Ա. Բակունցի ո՞ր պատմվածքն է սկսվում հետևյալ հատվածով:**

«Աշուն էր, պայծառ աշուն…

Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ: Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համարել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները, կարմրին տվող մասրենու թփերը»:

1) «Ալպիական մանուշակ»
2) «Սպիտակ ձին»
3) «Խոնարհ աղջիկը»
4) «Միրհավ»

28 **Պ. Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի
Եվ հետո մարդկանց դարեր շարունակ զարմանք պատճառում,
Բայց Նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լոկ այն պատճառով,
Որ անչափ շատ են սպասել Նրանց:

1) «Վարք մեծաց»
2) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
3) «Մարդ էլ կա, մարդ էլ»
4) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»

29 **Ո՞ր խոսքը Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի որ հերոսինն է:**

1. «Արդարև, մայրաքաղաքս ինքզինքը բախտավոր համարելու է ձեզ պես պատվական ազգայինի մը… Հայրենասեր անձ մը… Ազգասեր, ուսյալ, կրթյալ… Ազնվասիրտ, ազնվախոհ, ազնվաղեմ մեկ մը իր մեջ ունենալու համար»:
2. «Ես ինքզինքս չէի կարծեր այնչափ մեծ մարդ, որչափ որ կկարծե այս խմբագիրն, բայց հարկավ ան ինձմե աղեկ գիտե իմ որչափ մեծ ըլլալս, վասնզի խմբագիր մ’է և ուսումնական է….»:
3. «Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո դեմ կը կռվեր, տգիտությունը գիտության դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրիչի դեմ, ատելությունը սիրո դեմ, կրակը ջուրին դեմ, միսը բանջարեղենին դեմ…»:
4. «…Թաղականին գործն ալ այսօր լմնցուցինք. կիրակի օրը քվեարկությունը պիտի կատարվի, և բոլոր անդամները պատվավոր մարդիկ պիտի ըլլան»:

ա. խմբագիր
բ. բանաստեղծ
գ. Մանուկ աղա
դ. Աբիսողոմ աղա

1) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
2) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
3) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ

30 **Ինչպե՞ս է Գ. Զոհրապի «Զաբուղոն» նորավեպի նույնանուն հերոսը բանտ ընկնում:**

1) Սպանում է սիրած աղջկա հետ կապված տղային:
2) Կռվի է բռնվում ոստիկանության հետ:
3) Նրան մատնում է իր սիրած աղջիկը:
4) Բռնվում է մեծ գողության մեջ:

31 **Ո՞ր պնդումը ճիշտ *չէ* Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմի վերաբերյալ:**

1) Պատկերված է երկաթուղային կայարանը՝ որպես հին աշխարհի խորհրդանիշներից մեկը:
2) Քնարական պոեմ է, որի միակ հերոսը բանաստեղծն է:
3) Պոեմն սկսվում է նախերգանք-ուղերձով, որը հղվում է ողջակիզվող հոգիներին:
4) Պոեմում հանդես է գալիս պայքարող ժողովուրդը, իսկ որպես խորհրդանիշներ՝ հինը մարմնավորող քաղաքը, երգը, մայրամուտը, արևը:

32 **Ո՞ր շարքի ստեղծագործություններից ոչ մեկի հեղինակը Հ. Մաթևոսյանը *չէ:***

1) «Ավելորդը», «Նարինջ զամբիկը», «Սպիտակ ձին»
2) «Աշնան արև», «Տոհմի կանչը», «Թագադրում»
3) «Մթնաձոր», «Ծիրանի փողը», «Կանաչ դաշտը»
4) «Իմ սիրտը լեռներում է», «Ծաղկած փշալարեր», «Քարափը»

33 **Քանի՞ կետադրական սխալ կա հետևյալ նախադասության մեջ:**

Հինավուրց եկեղեցու կորնթարդ գմբեթը խարխլվել էր հիսուն-վաթսուն տարի առաջ, բայց ամբողջովին չէր ավերվել. մինչև օրս կանգուն է գմբեթի կեսը և հիմա էլ վերև բարձրացող անմիտ հետաքրքրասերներից շատերը, չըմբռնելով այդ պատմական հուշարձանի կարևորությունը, իրենց անուններն են փորագրում գավթի՝ դեռևս կանգուն մնացած պատերին:

34 **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**

մակդիր, հանգավորում, անձնավորում, շրջադասություն, համեմատություն:

Քո քաղցր վիշտը, սի՛րտ իմ մենավոր,
Քո վիշտն է փռված անհուն աշխարհում,
Քո սերն է վառված և՛ պայծառ, և՛ խոր,
Քո խենթ կարոտն է ամեն տեղ լռում:

35 **Բառերից քանիսո՞ւմ *է(ե)* ձայնավորի հնչյունափոխություն կա.**

իհարկե, ինքը, իրական, իմանալ, իջևան, իշիաս:

36 **Բառերից քանիսի՞ արմատին կարող է միանալ *-ակ* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.**

մահ, ձնագունդ, ազդ, ինչքան, հաջող, հեծելագունդ, աղավնի, վեճ, լեզվաբան, ավազ:

37 **Տրված գոյականներից քանիսի՞ հոգնակին է սխալ կազմված.**

լուսանցքեր, մրջնակերներ, փորձագետեր, հողմացույցներ, քարհանքեր, կեռագծեր, քվեաթերթեր, օրհներգներ, մրցավարեր, օրենսգրեր:

38 **Տրված հատվածում քանի՞ որոշիչ կա:**

Երբ հոռոմների դեսպանը հաջորդ օրը Սուրմառի ժամանեց, ասես ոչինչ էլ չէր եղել՝ ո՛չ Անին նվաճելու եկած բյուր բանակը, ո՛չ ահեղ ճակատամարտը, ո՛չ իրենց միակ կյանքը Ախուրյանի ջրերում թաղած հազարավոր զոհերը:

39 **Նշել այն բարդ նախադասությունների համարները, որոնցում ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն կա:**

1. Մեզ ավելի հաճելի են նրանք, ովքեր պաշտպանում են մեզ ոչ իրենց շահի համար:
2. Ինչ որ կատարվում է երկրի վրա, Աստծու կամքով է կատարվում:
3. Զգացի, որ երկրաշարժ չէ, այլ մի ուրիշ աղետ:
4. Մենք չենք հանդուրժում, երբ մեզ մոլորեցնում են հարազատ մարդիկ:
5. Հերոսները նրանք են, ովքեր կարողանում են արհամարհել մահը:

40 **Նշել այն գրողների համարները, որոնք գրել են դրամատիկական երկեր**.

1. Ռաֆֆի, 2. Ալ. Շիրվանզադե, 3. Ն. Զարյան, 4. Ա. Բակունց, 5. Հ. Սահյան, 6. Մ. Մեծարենց, 7. Լ. Շանթ, 8. Ավ. Իսահակյան, 9. Պ. Դուրյան:

41 **Նշել այն բառերի համարները, որոնք գրվում են միասին.**

1. Տեր(Հարությունյան), 2. մի(քանի), 3. արտա(սահման), 4. փորձ(անել), 5. ի(ծնե), 6. ավանդա(զրույց), 7. բազմա(համակազմ), 8. ինչ(որ)է, 9. բնակ(մակերես):

42 **Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:**

1. օձիքը բռնել-բկին չոքել
2. երեսից կախվել-ոտքերն ընկնել
3. ջուրը չտեսած՝ բոբիկանալ-հարսի տանը հարսանիք է, փեսի տանը հեչ խաբար էլ չեն
4. դեմքը կորցնել-դիմակը պատռել

43 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի ածանցավոր բայ կա:**

1. Եվ ես արթնացա խնդության ցավից.
   Գիշերվա հովն էր լալիս դաշտերում,
   Մութ հեռաստանն էր դժկամ նայում ինձ,
   Մենակությունն էր քարի պես լռում:
2. Քնկոտ առվին թեքվեց ուռին,
   Աստղերը ելան ցիրուցան…
3. Մի՛ բազմապատկիր ցավն իմ հեծության
   Եվ մի՛ խոցոտիր վիրավորվածիս:
4. Ծաղիկներն անուշ բույր են բուրվառում,
   Մեռած լուսնյակը՝ մենակ ու աղոտ,
   Սփռում է շուրջը իր շողերը ցուրտ,
   Հավետ լռում է մի տխուր խորհուրդ:
5. Թռվիչ քնքշությամբ հանգչող աշխարհում
   Երեկոն վառեց լույսեր դժգունակ.
   Մութը հյուսում է տրտմության ժանյակ...

44 **Նշել մակբայների համարները.**

1. մոտակա, 2. բացեիբաց, 3. օր օրի, 4. այսպես, 5. եռյակ, 6. խստիվ, 7. հավետ, 8. հաճախակի, 9. հազիվհազ:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Ե՛վ բարդ, և՛ ածանցավոր բառերի կազմում կարող են լինել անկախ գործածություն չունեցող արմատներ:
2. ***Փայտամած, կասկած, տխրամած, հանգած*** բառերում ***ած***-ը վերջածանց է:
3. Գրաբարյան ***ն*** վերջնահնչյունը բառակազմական դեր չի կատարում. այն վերականգնվում է միայն հոգնակի կազմելիս:
4. ***Հաշվեգետ, ծաղկեփունջ*** բառերը անհոդակապ բարդություններ են:
5. Ածանցները փոխում են բառի իմաստը և նոր բառ կազմում, վերջավորությունները՝ նույնպես:
6. Հայերենում կան ***ան, ի*** նախածանցներ, ինչպես նաև ***ան, ի*** վերջածանցներ:

Բ մակարդակ

46 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա:**

1) ու-եգրություն, սովա-ուկ, մ-կածուփ, այ-ենարան
2) երե-ոբիչ, Վիե-ա, տա-ական, չո-որդ
3) բե-ի, խճու-ի, ու-ածիգ, միատա-
4) խորաք-ին, հո-երգություն, անդո-, ա-վաճ

47 **Ո՞ր շարքում հատուկ անվան գրության սխալ կա:**

1) Սան Մարինո, Բլեզ Պասկալ, Սիամի Ծոց, երևանյան գիշերներ
2) Աղիս Աբեբա, Ռեչ Պոսպոլիտա, Սանտա Կրուզ, Սասանյան Պարսկաստան
3) Սան Ստեֆանո, Իսրայել Օրի, Լևոն Մեծ, Արիստակես Լաստիվերտցի
4) Գայլ Վահան, Արմեն Լյուբեն, Սաուդյան Արաբիա, Սեյշելյան Կղզիների Հանրապետություն

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա:**

1) կռփամարտ, դասընկեր, գրախոս, գրավ
2) գռեհիկ, անմխիթար, անշրջահայաց, անմատչելի
3) գրքասեր, ոտնահարել, զվարճանալ, ձեռնբաց
4) չնչին, հակադրվել, կրթություն, կրնկակոխ

49 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Ավանդույթի համաձայն՝ Թիֆլիսում ամեն տարի տոնվում է *Վարդատոն* կոչված սայաթնովյան հանդեսը:
2) Լուսնի մահիճը դժգույն լուսավորում էր ծուռումուռ արահետը:
3) Դու ինձ հրավիրեցիր քեզ մոտ իբրև հյուրի և քո ասպնջականությունը խաբեությամբ պսակեցիր:
4) Զբոսաշրջիկները իրենց ապշած հայացքները հառել էին դեմ դիմաց հառնող երկնաքերներին:

50 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) ***հոպոպ*** – երկար կեռ կտուցով թռչուն, ***դժոխալուր*** – լսելու համար անախորժ
2) ***ախտալլուկ*** – հիվանդությունից տանջված, ***խավարտ*** – շատ մութ
3) ***հողաթափ*** – տնային բաց ոտնաման, ***պարմանուհի*** – երիտասարդ աղջիկ
4) ***հովատակ*** – արու ձի, ***ակրատ*** – թեթև նախաճաշ

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոդակապով:**

1) նորափթիթ, առանձնապես, շեշտակիր, ականանետ
2) ձերբակալել, կառավարել, անասուն, փափկասուն
3) շողավարդ, շողարձակ, շնորհաշատ, շուշանաթույր
4) մանածաթել, մայրապետ, միամիտ, մինուճար

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերջածանցավոր:**

1) լայնակի, հայրենի, հոսանք, մարդատար
2) մրցակից, գնդակ, սփռոց, կառույց
3) կանուխ, աղերսագին, թավուտ, վերջին
4) արգելակ, կոճակ, ալյակ, պատանեկան

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:**

1) որպիսի, սույն, ողջ, ոմն
2) ով, նույնպիսի, ոչինչ, բազմիցս
3) այսինչ, մի քանի, մեկը, քառորդ
4) ինչու, ոչ ոք, որպեսզի, մյուս

54 **Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ *չկա:***

1) Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր
Ուղիների ժապավեններն անհամար:
2) Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն,
Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:
3) Աչքս դիպավ աչքի բոցին,
Ու գլուխս կախեցի…
4) Փողոցներն ահա դադար են առնում,
Ննջում են խաղաղ խրճիթ ու պալատ:

55 **Ո՞ր տարբերակում բաղադրյալ ժամանակաձև կա:**

1) Քիչ հետո արդեն նա իրեն կզգա հայի որբ մանչուկ.
Կուզենա կանչել,
Բայց ձայն չի ելնի...
2) Եվ վերելքդ թող լինի դժվար,
Թող գագաթը քեզ անհաս թվա...
3) Ի՜նչ քաղցր է նստել այստեղ,
Ժպտալ քո խոսքին սեթևեթ...
4) Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ...

56 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ *չկա:***

1) Հեռվում երևացին մշուշված սարերը:
2) Հազրոն առավ իր կնոջն ու աղջկան, անցավ լեռից լեռ, քարանձավից քարանձավ:
3) Նա հանեց ծիրանի փողը, որով նվագել էր կապույտ լեռների երգը:
4) Այս հանգամանքը վիատեցրեց վերջին դիմադրողներին:

57 **Ո՞ր նախադասությունն է անենթակա:**

1) Ապրե՜լ, ապրե՜լ, այնպե՜ս ապրել,
   Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը:
2) Մուրաբայի վարդը իր ցողունից առանձնացվում է թարմ վիճակում:
3) Ահա մեծ քաղաքի լքված ծայրամասերից մեկի թաղը:
4) Երկու օր շարունակ անձրևում է:

58 **Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Առավոտյան երբեմն արծաթագօծ սանրը հանում էր, դիտում իրեն ոտքից գլուխ:

1. երբեմն (ա. որոշիչ, բ. ժամանակի պարագա, գ. պարագայական բացահայտիչ)
2. հանում էր (ա. պարզ ստորոգյալ, բ. բաղադրյալ ստորոգյալ, գ. ստորոգելի)
3. իրեն (ա. հատկացուցիչ, բ. հանգման խնդիր, գ. ուղիղ խնդիր)
4. սանրը (ա. ուղիղ խնդիր, բ. ենթակա, գ. ստորոգելի)

1) 1-գ, 2-բ, 3-բ, 4-գ
2) 1-բ, 2-ա, 3-ա, 4-բ
3) 1-բ, 2-ա, 3-գ, 4-ա
4) 1-ա, 2-գ, 3-ա, 4-բ

59 **Ո՞ր նախադասության մեջ է պարագան արտահայտված գոյականով:**

1) Եթե ուզեն, արեգակներ կշպրտեն երկինքն ի վեր…
2) Հետո նրանք իմացան միմյանց անուններն ու մտերմացան:
3) Անսահման սիրում է իր ծնողներին:
4) Ու դժժում է աղմուկը խուլ գիշերային կայարանում…

60 **Ո՞ր նախադասության մեջ ներգործող խնդիր կա:**

1) Ու ձորի գլխին մոլորված կանգնած՝
   Նայում է ներքև՝ սիրտը սևակնած...
2) Ի՞նչ է պահանջվում գյուղի ղեկավարությունից, պահանջվում է, որ թույլ տան ձի պահել:
3) Լեռնե՛ր, ներշնչված դարձյալ ձեզանով,
   Թնդում է հոգիս՝ աշխույժով լցված:
4) Թագավորի հրամանով նրան դատապարտեցին մահվան:

61 **Ո՞ր նախադասության մեջ բուք պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Այդպիսի փոքրոգիներն ընդհանրապես քիթները դեպի երկինք են ցցում և կարծում այդպես կկարողանան երկինք մտնել:
2) Թե ուր էին կորել թերահավատ նախապաշարումներս ու խոհերս որոնք անընդհատ ճնշում էին ուղեղս քաղաքի փոշոտ փողոցներում ես չեմ կարող ասել:
3) Իմ երազներում հաճախ նա ինձ պատկերանում է որպես վաղեմի մի բարեկամ:
4) Չգիտես որ մեղքի համար ապաշխարող բնակիչները կծկվել էին բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում:

62 **Պնդումներից ո՞րն է ճիշտ:**

1) «Անլռելի զանգակատուն»-ը Պ. Սևակի առաջին ստեղծագործությունն է:
2) Հայ գրականության մեջ քնարական պոեմի դասական օրինակներ են Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» և Հ. Թումանյանի «Անուշ» պոեմները:
3) Ե. Չարենցի «Տաղարան» շարքը գրված է Նահապետ Քուչակի հայրենների նմանողությամբ:
4) Դանիել Վարուժանի «Հացին երգը» շարքը ներկայացնում է հացի արարման ընթացքը:

63 **Երկտող տներից կազմված բանաստեղծությունը, որում տների երկրորդ տողերը հանգավորվում են առաջին տան տողերի հետ, կոչվում է՝**

1) հայրեն
2) տրիոլետ
3) գազել
4) սոնետ

64 **Տրվածներից քանի՞սն են համապատասխանում Ավ. Իսահակյանի ստեղծագործություններին:**

- «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծության մեջ հեղինակը վկայում է, որ մեր գուսանները խանդավառ գովերգել են հայ դյուցազունների հաղթանակը՝ ծաղրելով ոսոխների պարտությունն ու տեսնելով մեր շքեղ ապագան:
- «Հայրենի հողը» ստեղծագործության մեջ արքայից վիրավորված զորավարի մոտ որոշում են գնալ գուսանն ու ծեր շինականը՝ հայրենի հողով, տավիղով ու երգերով հիշեցնելու նրան իր հայրենիքն ու նախկին փառքը:
- «Հավերժական սերը» ստեղծագործությունն ավարտվում է նրանով, որ Էլ-Սամանի և բամբիշի սիրո պատմությունից արդեն անցել են դարեր, և անապատը ծածկել է ամեն ինչ, նաև Թադմորի ապարանքն ու Էլ-Սամանի անմահ սիրո վկա աշտարակը:
- «Աբու-Լալա Մահարի» պոեմում անապատ հեռացող բանաստեղծը դառը խոսքեր է ասում բոլորի հասցեին՝ բացառություն անելով միայն ազնիվ ու հավատարիմ ընկերոջը:

65 **Բառերից և բառաձևերից քանիսի՞ բոլոր վանկերն են փակ.**

ծածկույթ, քայլվածք, ծածկոցներ, ընդգծվել, փշրտել, սայլապան, կարկամել, բանակցել, նրբագեղմ, անպայման, ներամփոփ, ամրացնել:

66 **Քանի՞ գոյական կա տրված հատվածում:**

Նա սովորական հոգևորականներից ավելի ազդեցիկ էր խոսում, և զրուցակիցը ստիպված էր լինում առանց այլևայլության ենթարկվելու նրան: Նա ուներ հուսալի խելամտություն և գիտելիքներ, որոնցով օժտված են միայն իրոք հոգևոր անհատները: Խոստովանում եմ՝ ես շատ բան ունեի սովորելու այդ մարդուց:

67 **Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված բարդի:**

1. *Զգաց իր՝ այլևս այդ անտանելի ճնշմանը չդիմանալը:*
   Զգաց, որ ինքն այլևս չի դիմանում այդ անտանելի ճնշմանը:
2. *Մեր ճարտարապետական վաղեմի կոթողները չտեսածը թող չխոսի հայրենիքից:*
   Նա, եթե չի տեսել մեր ճարտարապետական վաղեմի կոթողները, թող չխոսի հայրենիքից:
3. *Հասմիկը շատ էր անհանգստանում որդու՝ գիշերը ուշ տուն գալուց:*
   Հասմիկը շատ էր անհանգստանում որդու համար, քանի որ գիշերը ուշ էր տուն գալիս:
4. *Ո՞վ կհերքի վշտի՝ մարդուն դժբախտացնելը:*
   Ո՞վ կհերքի, որ վիշտն է մարդուն դժբախտացնում:

68 **Նշել այն բառերի համարները, որոնք ընդհանուր արմատ ունեն.**

1. խաժակ, 2. ակնոց, 3. բյուրակն, 4. սևակ, 5. դասակ:

69 **Դասավորել համարները այն հերթականությամբ, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Վեհապանծ կոթողի բարձրությունը հասնում է հիսունչորսուկես մետրի, իսկ սանդուղքների թիվը երկու հարյուր իննսունչորս է: Աշտարակի ահռելի ծանրությունը տասնչորս հազար հինգ հարյուր տոննա է, և մարմարիոնե այդ հսկա զանգվածը թեքված է չորս մետր երեսունվեց սանտիմետր:
2. Պիզայում հիացմունք պարգևող, առինքնող ու իրենց չնաշխարհիկ գեղեցկությամբ հոգիդ թրթռացնող տեսարժան վայրեր շատ կան, որոնցից ամեն մեկը գրավիչ է յուրովի, բայց նրանց մեջ ակնբախ լուսապսակ է թեք աշտարակը:
3. Հազար ինը հարյուր վաթսունչորս թվականի երկրաշարժից հետո թեքությունն ավելի մեծացավ, և Իտալիայի կառավարությունը հապշտապ դիմեց աշխարհի բոլոր մասնագետներին՝ մասնակցելու աշտարակի փրկության գործին:
4. Պիզա քաղաքը իր միջնադարյան ճարտարապետական նախշազարդ կոթողներով, սալահատակ հարթ փողոցներով ու անբասիր մաքրությամբ, ինչպես նաև անդորրությամբ մի առանձին գրավչություն ունի զբոսաշրջիկների համար:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Անք, ենք, ոնք*** ածանցներով կազմված բոլոր գոյականները պատկանում են ***գ*** հոլովման:
2. ***Ոջ*** հոլովման ենթարկվող բառերը գրական հայերենում ներգոյական հոլովաձև չունեն:
3. ***Անն*** հոլովման ենթարկվում են գրաբարյան ***ն*** վերջնահնչյուն ունեցող բառերը, ***ում*** վերջածանց ունեցող բառերը, ինչպես նաև ***անուն*** բառը:
4. Տարվա եղանակների բոլոր անունները պատկանում են և՛ ***ան,*** և՛ ***վա*** հոլովումների:
5. ***Ություն*** ածանց ունեցող հասարակ գոյականները ենթարկվում են ***ա*** ներքին հոլովման:
6. ***Ու*** հոլովման ենթարկվող բառերում ***ու*** վերջավորությունը դրվում է բառավերջի ***ի***-ի փոխարեն կամ ավելանում է բառի վերջում: